

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարտադիր ժամկետային զինծառայող Տիգրան Սուրենի Օհանջանյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

ՕՇԱՆՋԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍՈՒՐԵՆԻ

*Զորակոչվել է 2006թ. նոյեմբերի 26-ին Արաբկիրի զինկոմիսարիատից
Ծառայության է անցել ՀՀ ՊՆ թիվ 28418 զորամաս /Գեղարքունիքի մարզ/*

1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

2007թ. օգոստոսի 30-ին ժամը 22 անց 45-ի սահմաններում զորամասի կապի հանգույցի մոտ զինծառայող Տ. Օհանջանյանը հպվելով Ռ-419 ռադիոռելեային կայանը պահող ձգալարին, էլեկտրահարվել է և տեղում մահացել:

Փաստի առթիվ ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ (Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանքներ): Նախաքննության ընթացքում, շուրջ 8 ամիս անց մեղադրանք է առաջադրվել զինծառայողներ կապիտան Ռուստամ Ասատրյանի և պայմանագրային զինծառայող, սերժանտ Կարեն Թովմասյանի նկատմամբ: Հետազայում, դատարանի դատավճռով նշված անձանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ:

2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.

Ըստ Տիգրան Օհանջանյանի հոր՝ Սուրեն Օհանջանյանի, իր տղայի սպանությունը կատարվել է բանակային կորպուսի նախկին հրամանատար, ներկայումս ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ Հայկազ Բաղմանյանի «թիկնապահների» կողմից, որոնց որևէ կերպ չեն ներգրավվել քրեական գործի շրջանակներում: Իսկ դա հիմնավորվում է նաև նրանով, որ դեպքի վայրից ընդամենը 1.5 մետր հեռավորության վրա է գտնվում նշված անձանց հանգստյան սենյակը, հետևաբար և տեղեկացված են կատարվածի մասին:

Դժբախտ պատահարի փաստը բացառելով, դիմումատուն գտնում է, որ կատարվել է դիտավորյալ սպանություն:

3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.

Շուրջ 3 տարի նախաքննություն իրականացնելուց հետո, 2010թ. հունվարին դատարանի դատավճռով նշված երկու անձանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի նյութերը հետ ուղարկվել ՀՀ զինվորական դատախազություն, հանցանք կատարած անձին հայտնաբերելու և նրան մեղադրանք առաջադրելու նպատակով:

2011թ. հունվարին, ՀՀ զինվորական դատախազի ցուցումով հանձնարարվել է ՀՀ ՊՆ քննչական ծառայությանը նոր քննություն իրականացնելու համար: Ներկայումս քրեական գործի նախաքննությունը շարունակվում է: Գործով ձերբակալվածներ և կալանավորվածներ չկան:

4. Գործի քննության /հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն/ ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.

- Տ. Օհանջանյանի հագուստը պատահողոված վիճակում է եղել, սակայն շուրջ երկու ամիս ուշացումով փորձաքննության են ուղարկել բոլորովին այլ հագուստ, որն ըստ էության պատահողոված չի եղել,
- ձգալարը, որին հպվել է հանգուցյալը, դեպքի վայրից չի առգրավվել, մինչդեռ ընթերականերով քննիչը կազմել է արձանագրություն ձգալարը առգրավվելու մասին,
- քննիչի կողմից կեղծված է դեպքի վայրը,
- նշանակված առաջին դատաէլեկտրոտեխնիկական փորձաքննությունն իրականացնելիս, փորձագետը փորձաքննությունն իրականացրել է առանց համապատասխան սարքավորումների,
- վկա Արմեն Գալստյանը ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ ՀՀ զինդատախազի և ՀՀ ՊՆ քննչական ծառայության պետի մոտ հանդիպման ժամանակ տվել է իրարամերժ և հակասական ցուցմունքներ ու բացատրություններ, որոնք քննիչի պատշաճ ուշադրությանը չեն արժանացել,
- ակնհայտ կեղծումներ են տեղի ունեցել դատական բժիշկ Վիգեն Ադամյանի կողմից,
- քանի որ, դիմումատուներն ունեն հանգուցյալի նկարները մինչև դիախերձումը, ապա ակնհայտ է, որ դատաբժշկի կողմից չեն արձանագրվել աչքի, ծնոտի, գլխի հատվածներում առկա վնասվածքները, ձեռքի ափի կապտուկները: Բացի այդ, Տ. Օհանջանյանը բանակ է զորակոչվել առանց առջևի վերին կտրող ատամի, մինչդեռ փորձաքննության եզրակացության մեջ նշված է, որ վերին ատամնանաշարը բնական է և ամբողջական:

5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.

Ձեռնամուխ լինել մեղավորներին հայտնաբերելու և համարժեք պատիժ նշանակելու ուղղությամբ,

Անցկացնել անկախ բժիշկ մասնագետների մասնակցությամբ դատաբժշկական օբյեկտիվ փորձաքննություն:


6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ քրեական գործի շրջանակներում դիմումատուի կողմից մատնանշված անձանց հարցաքննելու, ինչպես նաև անկախ բժիշկ մասնագետների ներգրավմամբ փորձաքննություն նշանակելու նպատակով:

- Դիմել ՀՀ Առողջապահության նախարարին՝ դատաբժշկական գիտագործնական կենտրոնի տնօրենի և նրա փորձագետների կողմից թույլ տված ոչ իրավաչափ գործողություններն ու դրսևորած վարքագիծը քննարկման առարկա դարձնելու համար


Ծանոթագրություն: Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝



ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԴԻՄՈՒՍԱՏՈՒ՝



ՍՈՒՐԵՆ ՕՍԿԱՆՋԱՆՅԱՆ

(Տիգրան Օհանջանյանի հայրը)